ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-4261

«25» մայիսի 2022թ.

ԳՈՒՐԳԵՆ ՔԱՐՏԱԼՅԱՆ ԱՁ-ԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. ապրիլի 11-ի որոշմամբ 4-րդ չափաբաժնի մասով Գուրգեն Քարտալյան ԱՁ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

2022թ. ապրիլի 14-ին www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում (այսուհետ՝ տեղեկագիր) հրապարակվել է հայտարարություն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ: 2022թ. մայիսի 11-ին տեղեկագրում հրապարակվել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ բողոքներ քննող անձի 2022թ. մայիսի 6-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/62 որոշումը, որով ամբողջությամբ մերժվել է ներկայացված բողոքը՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով, գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ անգործության ժամկետի ավարտ սահմանելով 2022թ. մայիսի 21-ը ներառյալ (գնման ընթացակարգի կասեցմամբ պայմանավորված անգործության ժամկետի մնացած օրերի մասով):

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ համակարգ) միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/13» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788